





Կանոնագրական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիչ 2





ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կ





ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՅԿԱՅԻՆ

և

ՅԱՆՎԱՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒՄ



ԶԱՐԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ



և



ԶԱՐԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

هائراکيداق

HANRAKIDAGUE

ՇԱԲԱԹԱԿԱՆ

مجموعه علوم


JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

|| ԹԻԻ 2 ||

11 ՅՈՒՆԻՈՒՐ 1903

ԱՌՍՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ՀԱՃԻ ԵՓՐԵՄ ԷՖԷՆՏԻ ԻԲՐԱՆՈՍԵԱՆ

Ծնած է 1848ին Ամասիոյ մէջ, բարեկեցիկ ընտանիքէ։ Նախ-
նական ուսումն առած է Թաղային վարժարանին մէջ, վեց տարիի
չափ։ 1866ին Պոլիս եկած է և Մէրճան, Ալի փաշա խանն և ա-

պա Եալտըզ խանն հաստատուելով սկսած է յանձնարարութեամբ ապրանք ղրկել Ամասիա եւ ալլուր: Աշխատասէր, ուղղամիտ, ճշտապահ եւ խնայող ըլլալով, կրցած է տակաւ ընդարձակել իր գործառնութիւններն եւ անսահման վարկ մը վայելել Պոլսոյ հրապարակին վրայ: Առաջին անգամ Իբրանոսեան եղբայրներն են որ գաւառներու մէջ ի գործ դրին ածան ծախելով շատ ապրանք քշելու դրութիւնը, որմէ օգտուեցան թէ՛ իրենք եւ թէ գաւառաբնակ սպառողները: Այսօր, Իբրանոսեան եղբարք փայլուն դիրք մ'ունին հրապարակի վրայ: Իրենց պարկեշտ եւ ժիր գործունէութեամբ եւ իրենց բազմաճիւղ ու լայնածաւալ գործառնութիւններով մանիֆաթուրայի եւ մասնաւորապէս մանածի վրայ որ իրենց մասնագիտութիւնն է: Պոլսոյ կեդրոնական գրասենեկէն եւ վաճառատունէն զատ մասնաճիւղեր ունին Մանչէսթրի, Սամսօնի, Կիրասօնի, Տրապզոնի, Օրտուի, Ամասիոյ, Մարզուանի, Թոքատի, Չօրումի, Եօզղատի, Սվազի, Քասթէմունիի, Էնկիւրիի, Իզմիտի, Պրուսայի, Իյնէկէօլի եւ Նիքսարի մէջ:

Իբրանոսեան եղբարք 1898ին Ամասիոյ մէջ բացին Առեւտրական վարժարան մը, ուր 40է աւելի աշակերտներ կը յաճախեն, մեծ մասամբ ձրի: Բարեգործ եղբայրները մեծ գումար մը կը ծախսեն այս վարժարանին համար, որուն ընծայած հինգ անդրանիկ չըջանաւորներն հիմակ առեւտրական գործերով կ'զբաղին: Աւասիկ լռին բայց խմատուն բարեգործութեան սքանչելի օրինակ մը, որուն ներքողն իր նպատակին գործնական արդիւնքներուն մէջ կը խտանայ:

Հաճի Եփրեմ էֆէնտի բարի ու հեղահամոյր անձնաւորութիւն մ'է որ պատկառանք ու համակրանք կը ներշնչէ զինք ճանչցողներուն եւ շինիչ ու ցայտուն օրինակ մ'է ինքնօգնութեան ու աշխատասիրութեան:

Վեհ. Սուլթանը, որ վաճառականութեան, գիտութեանց եւ արուեստից մեծ պաշտպանն է, գնահատելով Հաճի Եփրեմ էֆ.ի ծառայութիւններն առ Օսմանեան վաճառականութիւնն, բարեհաճած է Սալիսէի աստիճան եւ Գ. Մէճիտիէ պատուանշան շնորհել անոր:



Կ Ե Ի Ռ

Ելից կշիռ. — Մտից կշիռ. — Փորձակշիռ. — Վերլուծական եւ
Համադրական կշիռ. — Վաճառականութեան կշիռ. (*Balance du
Commerce*). — Հաշուեկշիռ:

Մայր-Հաշիւը թուականի կարգաւ Օրհաշիւին մէջ անցած
յօդուածներուն դասակարգողն ըլլալով, հոն տարւում ամէն գու-
մար բնական է որ նախ Օրհաշիւին մէջ պիտի գտնուի. Այս կա-
նոնը բացառութիւն չունի: Նոյն իսկ պարտական եւ պահանջող
սօլսերը (մնացորդ հաշիւները) պիտք է նախ Օրհաշիւ անցնին: Ու-
րիշ խօսքով, հաշիւներու վիճակը ցոյց տուող սօլսերը, տարւոյն
վերջն եւ սկիզբը, պէտք է նախ Օրհաշիւ եւ ապա Մայր-Հաշիւ
անցնին կանոնաւորապէս: Ուրեմն, Ելից կշիռ կը կոչուի այն յօդ-
ուածը, որուն պաշտօնն է հաշիւները փակել տարւոյն վերջը, եւ
փոխադարձաբար Մտից կշիռ կը կոչուի այն յօդուածը որ միեւ-
նոյն հաշիւները կը բանայ յաջորդ տարւոյն սկիզբը: Գաղափարը
թուանշանով բացատրելու համար, աւասիկ հաշիւներու փակման
եւ բացման գործողութիւնները. —

————— 31 Դեկտ. 1902 —————

ԶԱՆԱԶԱՆԻ ԶԱՆԱԶԱՆԱՅ

Պարսկական եւ Պահանջող հաշիւները գոցելու համար

Դրամագրուի	100,000
Ապրանաց վնասին համար պահեստ	500
Անգանձելի պահանջներու համար պահեստ	5,000
Պահանջատեարք	90,472 ¹ / ₂
Արդիւնք 1902 տարւոյ	33,687 ¹ / ₂
	229,660
Կարասիին	7,000
Սնունդին	2,600
Ընդունելի տոմսակին	3,400
Ընդհանուր ապրանքին	41,660
Պարսկականաց	170,000
Անգանձելի պահանջքին	5,000
	229,660

1903 Յունվար 1ին, հաշիւները կը բացուին հակառակ յօդուածով մը որ ի նորոյ կը հաստատէ այս հաշիւներուն սօյսերը. —

———— 1 Յունվար 1903 —————

ՁԱՆԱԶԱՆԻ ՁԱՆԱԶԱՆՑ

Կարասի	7,000
Սնունկ	2,600
Ընդունելի տունակ	3,400
Ընդհանուր ապրանք	41,660
Պարտականք	170,000
Անգանձելի պահանջք	5,000
	229,660
Դրամագլուխին	100,000
Ապրանք վնասին համար պահեստին	500
Անգանձելի պահանջքներու համար պահեստին	5,000
Պահանջատեարց	90,472 ¹ / ₂
1902 տարւոյ արդիւնքին	33,687 ¹ / ₂
	229,660

* * Հաշուակալութեան գլխաւոր գործիքներն երեք են. — Օրհաշիւ, Մայր-հաշիւ եւ Փորձակշիւ: Փորձակշիւը հաշիւներու մընացորդ գումարներուն մէկ ցուցակն է, որ նպատակ ունի 1. — Հաստատել թէ Օրհաշիւին մէջ արձանագրուած պարտքերն ու պահանջները ճշտիւ փոխադրուած են ի Մայր-հաշիւ. 2. — Պարտական կամ պահանջող սօյսերով, որոց գումարն հաւասար կուգայ, ցոյց տալ Մայր-հաշիւին պարտական կամ պահանջող հաշիւներուն վիճակը: Արգարեւ, չի բաւեր օրն օրին եւ կանոնաւորապէս Օրհաշիւ անցընել և հոնկէ Մայր-հաշիւ փոխադրել գործողութիւնները, այլ պէտք է մանաւանդ ճշտել թէ գումարներն իրար կը բռնե՞ն: Կրկնատոմարի մէջ օրէնք է որ Օրհաշիւ եւ անկէ Մայր-հաշիւ անցած ամէն պարտք հաւասարակշռուի պահանջքով մը, եւ փոխադարձաբար: Ասկէ կը հետեւի որ Օրհաշուին Պարտք եւ Պահանջք սիւնակներուն գումարներն հաւասար կուգան ի վերջ օրուան կամ ամսոյ: Կը հետեւի նաեւ որ Մայր-հաշուի Պարտք և Պահանջք սիւնակներն ալ հաւասար գումարներ կը ներկայացնեն: Գալով մնացորդին (սօյս) կամ իւրաքանչիւր հաշուի պարտքին ու պահանջքին տարբերութեան, անոնց գու-

մարին մէջ ալ հաւասարութիւն կը տեսնուի: Փորձակշիռը, որուն յաճախակի պատրաստումը շատ օգտակար է հաշիւներուն մէջ սպրդած սխալները շուտով գտնելու համար, կը գրուի զատ թուղթի կամ մանաւանդ տետրակի մը վրայ, սա ձեւով. —

Փ Ո Ր Զ Ա Կ Շ Ի Ռ

		Գումար		Սօլո	
		Պարտք	Պահնջք	Պարտք	Պահնջք
1	Դրամագլուխ		30,000		30,000
5	Կարասի	1,400		1,400	
6	Մնտուկ	33,302	8,100	25,202	
30	Ընդհանուր ծախք	650		650	
45	Չանազան պարտականք	7,250	1,875	5,375	
50	Չանազան պահանջատեարք	3,725	6,352		2,627
		46,327	46,327	32,627	32,627

Փորձակշիռի գումարներն հաւասար ըլլալով Օրհաշիւին Պարտք եւ Պանանջք սխեմակներու գումարներուն, կրնանք ապահով ըլլալ թէ Մայր-հաշիւն համաձայն է Օրհաշուին: Մայր-հաշուի սխեմակներուն գումարները նախ մատիտով կ'ըլլան եւ յետոյ մեղանով կը գրուին ամսական գումարներու սխեմակին մէջ երբ Փորձակշիռը ճիշտ ըլլայ: Երբ պարտականներու կամ պահանջողներու թիւը շատ ըլլայ եւ չկարենայ պարունակուիլ միակ Մայր-հաշուի մը մէջ, այն ատեն հաւաքական հաշիւներ կը կազմուին, ինչպէս Զանազան պարտականք, Զանազան պահանջատեարք եւլն., իսկ ասոնց մանրամասնութիւնը կ'անցնի օժանդակ Մայր-հաշիւներու մէջ: Եւ քանի որ Պարտականներու եւ Պահանջողներու անհատական հաշիւներն երկրորդ Մայր-հաշուի մը մէջ պիտի անցնին, հարկ կ'ըլլայ երկրորդ Փորձակշիռի մը, որ երկրորդ Մայր-հաշուի գումարներուն եւ ընդհանուր Մայր-հաշուի հաւաքական հաշուոց գումարներուն հաւասարութիւնը ցոյց կուտայ: Փորձակշիռը, փոխանակ պարզապէս Մայր-հաշուին եւ Օրհաշուին գումարներուն հաւասարութեան ապացոյցն ըլլալու, հաշուական ու վարչական տեսակէտով շատ աւելի մեծ կարեւորութիւն մը կըստանայ: Հաշուեկշիռին զանազան մասերուն կացութիւնը ցոյց կուտայ, այսինքն ի վեր կը հանէ Դրամագլխի, Ծարժուն եւ Անցարժ

արժեքներու, Արդիւնքի եւայլն հաշիւներուն կարեւորութիւնը: Փորձ հաշուակալներ ու վարիչներ կրնան մեծապէս օգտուիլ հաշիւներու այսպիսի վերլուծումէ եւ համադրութենէ, որուն աւաստիկ մէկ նմոյշը. —

Հաշիւներու վերլուծական եւ համադրական կէտի օրինակ

Ա. Դրամագլխի հաշիւներ				
Գումար եւ սոյս տարբեր մեղանով	—	—	—	—
Բ. 1. Անշարժ արժէքներու հաշիւներ				
Գումար եւ սոյս տարբեր մեղանով	—	—	—	—
Բ. 2. Շարժուն արժէքներու հաշիւներ				
Գ. Գումար եւ սոյս տարբեր մեղանով	—	—	—	—
Բ. 3. Ոչ-տրամադրելի (engagé) արժէքներու հաշիւներ				
Գումար եւ սոյս տարբեր մեղանով	—	—	—	—
Դ. Երրորդներու հաշիւներ				
Գումար եւ սոյս տարբեր մեղանով	—	—	—	—
Բ. Արդիւնքի հաշիւներ				
Գումար եւ սոյս տարբեր մեղանով	—	—	—	—
Ա. Բ. Գ. և Դ. ի գումարներն ու սուտերը սեւ մեղանով	—	—	—	—

Տարբեր մեղանով եղած գումարները դրամագլխին իւրաքանչիւր մասերուն պարբերական վիճակը ցոյց կուտան, եւ ասիկա թանկագին արդիւնք մ'է զոր չի կրնար տալ անկանոն փորձակշիռ մը, ուր խառն ի խուռն գրուած են մարդերու և իրերու բոլոր հաշիւները, Հաշուական այս կարգապահութեամբ օգտակար լուսաբանութիւններ ստանալ փափաքող վաճառականները, ճարտարագործները, տնտեսագէտներն ու ազարակատէրերն ամսական, շաբաթական եւ նոյն իսկ օրական փորձակշիռներ պատրաստելով կրնան իրենց հասոյթի զանազան աղբիւրները քննել, պարագաներուն համեմատ գիտակցաբար շարժիլ եւ իրենց գործերը վարել ո'չ թէ ըստ դիպուածի, այլ մէթոտիկ կերպով: Փորձակշիռն յաճախակի պատրաստութիւնն էական պայման մ'է: Բարեբախտաբար ամսական փորձակշիռներ յաջորդած են հիմա տարեկան կամ վեցամսեայ փորձակշիռներու, որք հաշիւներուն սխալը շատ ուշ երեւան կը հանեն եւ աշխատութիւնը կը դժուարացնեն: Մեր վաճառականները կ'սկսին ընդունիլ որ հաշուական կարգապահութիւնն էական տարր մ'է գործի մէջ յաջողութեան: Անոնցմէ շատեր կը խոստովանին թէ կարելի չէ բազմաճիւղ գործ մը վարել եթէ հաշիւներուն վրայ լրջօրէն ֆօնդօլ չըլլայ: Բայց

Ընդհանուր Ծախքի մէջ իբր թէ խնայութիւն ընելու համար է որ իրենց սկզբունքը չեն գործադրեր: Լաւ ու կանոնաւոր հաշուակալութիւն մը հմուտ եւ փորձառու հաշուակալներու միջոցաւ միայն կ'ըլլայ, եւ հմուտ հաշուակալ մը պզտիկ վարձքով չի գոհանար: Խելացի վաճառականը, հասկնալով թէ ճշմարիտ խնայողութիւնը կը կայանայ արդիւնաւոր ծախքերն ոչ-արդիւնաւորներէն զատելու արհեստին մէջ, սկզբունքէն կ'անցնի գործադրութեան: Մ. Լէօն Սէյ կ'ըսէ թէ վաճառականը կը նմանի նաւարկուի մը որ ամէն օր պէտք ունի իր նաւուն դիրքը ճշտել եթէ կ'ուզէ նաւահանգիստ հասնիլ անվտանգ:

Վաճառականութեան Կշիռ

Սահման. — Հարուստ եւ աղքատ երկիրներ. — Պարտական եւ պահանջող երկիրներ. — Համաժայնութիւն մասնաւոր եւ ընդհանուր շահերու. — Պաշտօնային նաւ. — Անզլիա եւ Հաիդի

(ՏԵՍՈՒԹԻՒՆ Մ. ԻՎ ԿԻԵՈՅԻ)

Մաքսապաշտպանք կ'ըսեն թէ երբ ազգի մը արտածութեանց կշիռը ներածութեանց կշիռէն ծանր ըլլայ, այն ազգը կը հարըտանայ: Հակառակ պարագային կ'աղքատանայ, վասն զի օտար ապրանք շատ կը գնէ եւ իր սեփական ապրանքը քիչ կը ծախէ այսինքն ամէն տարի միլիոններ կը լեցնէ օտարներուն ձեռքը: Եթէ վաճառականութեան կշիռի այս վարդապետութիւնը ճիշտ է, հարուստ ժողովուրդներուն արտածութեանց գումարը ներածութեանց գումարէն աւելի ըլլալու է: Տեսնենք թէ այնպէ՞ս է:

ԵՐԿԻՐՆԵՐ՝ ՈՐՈՑ ԿՇԻՐՆ ԱՆԵՊԱՍՏ Է

Ներած.

Արտած.

1000

Ֆրանսա	(1896)	Ֆր.	3,798,500	3,400,900
Անգլիա	»	»	9,620,000	6,005,000
Գերմանիա	»	Մարք	4,637,900	3,913,200
Պելժիա	»	Ֆր.	1,776,700	1,467,900
Հոլանտա	»	Ֆիօր.	1,634,900	1,337,400
Չուիցերիա	»	Ֆր.	993,900	688,300

ԵՐԿԻՐՆԵՐ՝ ՈՐՈՑ ԿՇԻՌԸ ՆՊԱՍՏԱԻՈՐ Է

Աւստրիա	(1896)	Ֆիոր.	705,300	774,000
Ռուսիա	»	Բալ.	538,500	689,100
Սպանիա	»	Բէզ.	734,200	872,300
Ամերիկա	»	Տօլ.	759,700	863,200
Բերու	»	»	17,505	25,473
Հարդի	»	»	6,053	9,463

Եթէ վաճառականութեան կշիռի վարդապետութիւնը ճիշտ ըլլար, Անգլիա աղքատ և Հարդի հարուստ եղած պիտի ըլլային: Արդ, վերի երկու ցուցակներուն վրայ ականարկ մը նետել կը բաւէ հասկնալու համար թէ վաճառականութեան կշիռն աննպաստ է հարուստ երկիրներուն եւ նպաստաւոր՝ աղքատ ու պարսական երկիրներուն: Այն երկիրները, որք պահեստի դրամագլուխ ունին, փոխատուի մը կամ շահակիցի մը կը նմանին: Իրենց սնտուկէն դուրս ելած ստակին տոկոսն ու շահը կ'առնեն: Կ'ըսուի թէ Անգլիա 2 միլիառ սղերլին կամ 50 միլիառ ֆրանք կը պահանջէ ուրիշ երկիրներէ: Հետեւապէս, հարիւրին 4 տոկոսի հաշուով կ'ընդունի 80 միլիոն սղերլին կամ 2 միլիառ ֆր., առանց փոխարէնը բան մը տալու: Ասկից դատ, Անգլիա աշխարհի ամէնէն մեծ փոխադրողն է: Անգլիացի նաւատէրներու եւ վաճառականներու շահած ստակն և պարտքերու տոկոսներն հատուցանելու համար Անգլիա զրկուած ապրանքներէն պանքէճներուն և վաճառականներուն առած յանձնարարողչէքներն ահագին գումարի մը կը հասնին: Մ. Ժօրճ Մըտլի 200 միլիոն սղերլին կամ 5 միլիառ ֆրանք կը հաշուէ այս գումարը: Վաճառականութեան կշիռի կուսակիցները չեն ուզեր տեսնել այս թուանշաններն որք Անգլիոյ ներածող կարողութիւնը կը ներկայացնեն: Կշիռին հնարիչները տեսեր են խանութպան մը որ ապրանք կը ծախէր և փոխարէն դրամ կ'առնէր: Ասկէ եզրակացուցեր են որ ազգ մը ապրանք ծախելու եւ ստակ քաշելու է որ շահ ըրած ըլլայ: Եթէ ապրանք առնէ, կորուստ կ'ընէ: Այս տրամաբանութիւնն իրական հիմ մը չունի: Խանութպանն իր ապրանքին փոխարէն առած ստակը չի պահեր, այլ ապրանք կը գնէ, եւ երբ տարւոյն վերջն հաշուեկշիռը պատրաստէ, շահ ըրած կ'ըլլայ եթէ վճարածէն աւելի գումար մը առած ըլլայ: Պատգիւհ հետեւեալ օրինակը տուած է. — Նաւ մը կը զրկուի Հալլէն Ամերիկա, Ա. պարագայ. — Նաւը, որ 200,000 ֆր. ի Բարիզեան ապրանք բեռցած

էր, կ'ընկղմի: Նաւատէրը կը գանգատի թէ փնաս ըլլած է, իսկ վաճառականութեան կշիռի կուսակիցը կ'ուրախանայ, վասն զի արտածումը պիտի աւելնայ: Բ. պարագայ. — Նաւն Ամե՛րիկա կը հասնի, շահ կ'ընէ, այդ շահով Ամերիկեան ապրանքներ կը գնէ եւ Հավր կը դառնայ: Նաւատէրը կ'ուրախանայ շահ ըրած ըլլալուն համար՝ իսկ վաճառականութեան կշիռի կուսակիցը կը լաւի, որովհետեւ ներածումն աւելցաւ: Այս իրողութիւնները ցոյց կուտան թէ մասնաւորներու շահուն եւ ընդհանուրին շահուն միջեւ հակասութիւն չկայ, վասն զի վաճառականութեան կշիռը միշտ աննպաստ է հարուստ երկիրներուն եւ նպաստաւոր՝ աղքատ եւ կիրներուն: Անոնք որ մաքսային կամ ուրիշ միջոցներով կը ջանան սահմանափակել ներածութիւնները, իրենց տնտեսական իտե՛լ ունին ո՛չ թէ Անգլիան, այլ Հարիւն:

ՔՈՒՐԶԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Քուրմը կ'ըստուի ամէն տեսակի կերպասի կտորուանքին, նոր կամ գործածուած: Քուրմը կը ծառայէ պարարտացուցիչ նիւթերու շինութեան: Իբր նախանիւթ կը գործածուի նաեւ թուղթի գործարաններու եւ թելքաշի (effilochage) գործանոցներու մէջ: Կերպասի այս կտորներն աւելի կամ նուազ առատութեամբ կը գտնուին բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ: Բըշահաւաքներու միջոցաւ փողոցներէն ժողվուելով, այս նիւթերը կը ծախուին քուրմի վաճառականներու որք կը զատեն, դասակարգերու կը վերածեն եւ հակերու մէջ դնելով կը զրկեն գործարանատէրերուն: Ստուրին տեսակէ բրդեղէնի քուրմերը կարգ մը երկիրներու մէջ կը գործադուին պարարտացնելու այն հողերն ուր կը մշակուին որթատու եւ հմու: Թղթաշինութեան յատկացած տեսակները նոր զատ մը կ'ենթարկուին գործարաններու մէջ: Քուրմերը երկու կ'ընէ բաժնուին, կարծր եւ կակուղ: Կտուներն եւ կարուստորները չուաններուն եւ վուշի կամ կանեփի խոյհետ կը կազմեն կարծր տեսակը, իսկ ճերմակ ու գուն, բակեղէնի կտորները՝ կակուղ տեսակը: Յատուկ գորորոց պաշտօնն է քուրմերը կտրել եւ գրէթէ հարիկ կտորներու վերածել, կոճակներն ու ճախճիպները բանալ եւ յոշիները մաքրել: Կուսար ու փոք

ծաւորներ կան
 յաւասար ու փոք-
 րմանդներն հանել,
 որումբ, ցովորաբար կը

կատարուի տեսակ մը մանգաղի միջոցաւ որ մետաղեայ թելավան-
դակի մը կեդրոնը կը գտնուի: Կարգ մը գործարաններու մէջ
այս բաժանումը մեքենայով կ'ըլլայ: Բուրջերն ապա մաղերու մէջ
կը դրուին ու կը լուացուին: Լաւագոյն տեսակ կերպասի քուր-
ջերը միայն թելքաշի կ'ենթարկուին: Այս ճարտարարուեստն հա-
զիւ վաթսոն տարիէ ի վեր գտնուած է: Մեքենական մասնաւոր
գործիքի մը միջոցաւ ֆանէլայի, կերպասի եւ ուրիշ ճերմակե-
ղէններու կազմիչ տարրը կը վերածուի իր նախնական վիճակին,
ի նորոյ կը հիւտուի եւ կ'ըլլայ վերածնեայ կերպաս մը: Երկրա-
գործութեան եւ թղթաշինութեան յատկացած քուրջերու գինն
զգալապէս իջած է մէկ կողմէ քիմիական պարարտացուցիչներու
կիրարկումով եւ միւս կողմէ թղթաշինութեան մէջ համազօր նիւ-
թերու գործածութեամբ: Միջին գիներն են. —

	100 ֆիւօն
Պարարտացուցիչի յատուկ քուրջեր	Ղրշ. 40—60
Խառն կապոյտ »	» 45—60
Ճերմակ աղտոտ »	» 50—70
Կապոյտ բամբակեղէնի »	» 60—75
Չուան »	» 90—110
Ճերմակ բամբակեղէնի »	» 60—120
Ճերմակ կտաւ »	» 90—150
Նոր »	» 150—175

Թելքաշի յատուկ քուրջերու 100 ֆիւօն կ'արժէ 75 ղշ. էն մինչեւ
1500 ղրշ: Բուրջերը ներքին մաքսատուրքէ ազատ են: 1897ին
միայն Ֆրանսա ներածած է 16 միլիոն ֆիւօյէ աւելի քուրջ, զա-
նազան տեսակ:



ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՍԸՆԹԱՑԸ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՏՈՒԹԵԱՆ

1. — ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱԻԱՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Société en nom collectif)

Նկարագիր. — Ընկերային անուն. — Հաւաքական ընկերու-
թիւնը ա՛յն է զոր երկու կամ աւելի անձեր կը կազմեն, նպատակ
ունենալով վաճառականութիւն ընել ընկերային անունի մը տակ:

Ընկերային անունը կը կազմուի բոլոր ընկերներուն կամ անոնցմէ մէկուն կամ մի քանիին անուամբ, որու կը կցեն եւ ընկերութիւն ըսուերը: Օրինակ, Գալփագնեան, Յովհաննէսեան եւ Ընկերութիւն: Հաւաքական ընկերութեան մը անդամներն անձնապէս եւ համեմատաբար պատասխանատու են ընկերութեան կնքած բոլոր յանձնառութիւններուն համար. — Անձնապէս, այսինքն թէ ընկերութեան պահանջատէրերն իրաւունք ունին ո՛չ միայն ընկերոջ մը բաժինին, այլ անոր անձնական հարստութեան ալ վրայ. — համեմատաբար, այսինքն մէն մի ընկեր պարտաւոր է ամբողջ պարտքը վճարել: Առնելիքս որն իրաւունք ունի իր բոլոր պահանջքն ուզել մէկ ընկերէ մը: Համեմատաբար պայմանն օգտակար է պահանջատէրին, քանի որ մէկ ընկերոջ մը վճարելու կարողութիւնը կ'ապահովէ իր բոլոր առնելիքը:

Պարտաւորիչ ձեւակերպութիւն. — Հաւաքական ընկերութիւնը կը կազմուի նօտարութեան կողմէ վաւերացեալ պայմանագրով կամ միայն երկուստեք ստորագրուած պայմանագրով, որուն յօդուածները պէտք է հրատարակուին երրորդներու համար որք չահ ունին գիտնալու:

Ընկերութեան վարչութիւնը. — Ընկերութիւնը պէտք ունի ներկայացուցչի մը որ անոր համար եւ անոր անուամբ գործէ: Այս ներկայացուցիչը կը կոչուի վարիչ: Վարչութիւնը երբեմն կը յանձնուի բոլոր ընկերներուն, եւ երբեմն մէկ կամ մի քանի ընկերներու: Հաւաքական վարչութեան մը առաջ եկած դժուարութիւններուն առաջին առնելու համար խոհեմութիւն է ընկերութեան պայմանագրին մէջ նշանակել վարիչն եւ անոր իրաւասութիւնը գծել: Վարիչ ընկերը կրնայ ընկերութեան հաշուոյն ապրանք ծախել, վճարումներ ընդունիլ, հաշուեցոյցներ կամ մուրհակներ ստորագրել, կը բաւէ որ խարդախութիւն մը չընէ: Իր բոլոր պաշտօնը կամ անոր մէկ մասը կրնայ յանձնել պաշտօնեաներու որք իր պատասխանատուութեան տակ կը գործեն: Երբ վարիչ մը որոշուած չէ յատկապէս, բոլոր ընկերներն ալ փոխադարձաբար իրաւունք ունին յանուն ընկերութեան գործելու: Անոնց իւրաքանչիւրին կատարած գործը վաւերական է, եթէ ընկերներէն մին կամ մէկ քանին չհակառակին:

Ընկերային անունի գործածումը. — Երբ վարիչն ընկերութեան անուամբ յանձնառութիւն մը կ'ընէ, կ'ստորագրէ ընկերային անունով որ ընկերութեան ստորագրութիւնն է: Այս ստորագրութեան գործածումը կը նշանակէ թէ յանձնառութիւնն ընկերութեան հաշուոյն եւ անոր շահուն համար եղած է: Առնելիքս որը, որուն ձեռքը մուրհակ կայ վարիչին կողմէ ընկերային անունով

ստորագրուած : կրնայ իր պահանջը գանձել նախ ընկերութեան գոյքերէն , և յետոյ ընկերներուն անձնական սեփականութենէն :

Վարիչին պատասխանատուութիւնը . — Իր գործառնութեանց մէջ ծանր յանցանք գործող վարիչը պատասխանատու է հանդէպ իր ընկերակիցներուն եւ կրնայ վնասուց հատուցման դատաւարտուիլ : Ասկից զատ , թէեւ իր իրաւտութիւնն ակզբամբ անձեռնմխելի է , երբ իր անունը նշանակուած է ընկերութեան պայմանագրին մէջ , բայց եթէ զեղծում գործած եւ յոռի վարչութիւն մ'ունեցած է , կրնայ պաշտօնանկ ըլլալ Առեւտրական դատարանի մը որոշմամբ :

2. — ՊԱՐՁ ԲՈՄԱՆՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Société en Commandite Simple)

Սահման . — Քօմանտիդ ընկերութիւնը կը կազմուի ընդմէջ մէկ կամ մի քանի անձերու , որք անձնապէս եւ համերաշխաբար պատասխանատու են , եւ մէկ կամ մի քանի ընկերներու , որք պատասխանատու են : Ուրեմն միայն իրենց դրած ստակին չափ պատասխանատու են : Ուրեմն Քօմանտիդ ընկերութեան մէջ երկու տեսակ ընկերներ կան . 1. — Մէկ կամ մի քանի ընկերներ՝ անձնապէս եւ համերաշխաբար պատասխանատու , այսինքն պարզօրէն հաւաքական ընկերութեան մը անդամներ , որք կը կոչուին ֆօմանսիդէ , 2. — Միւս ընկերները ընկերութեան մէջ իրենց դրած կամ դնել խոստացած դրամին չափ միայն պատասխանատու են եւ կը կոչուին ֆօմանսիդէռ : Քօմանտիդէռը չահէն կ'առնէ իր բաժինը որ ճշտուած է ընկերութեան պայմանագրին մէջ , եւ եթէ կորուստ կայ , իր անձնական ոտացուածքէն չի հատուցաներ , այլ միայն իր բերածէն : Քօմանտիդ ընկերութիւնը շատ ազէկ կը յարմարի անոնց որք չեն ուզեր իրենց անունով վաճառականութիւն ընել , եւ կը վախճան անսահման պատասխանատուութեան մը ենթարկուելէ , ինչպէս կ'ենթարկուի հաւաքական ընկերութեան մը անդամը :

Ընկերային անուն . — Քօմանսիդէռները չեն կրնար վարիչ ըլլալ . — Քօմանտիդ ընկերութեան մէջ ալ ընկերային անուն մը կայ որ անձնապէս պատասխանատու ընկերով կամ ընկերներու անունով միայն կրնայ կազմուիլ : Քօմանտիդէռի մը անունը չի կրնար մտնել անոր մէջ : Քօմանտիդ ընկերութիւններն ալ կը կազմուին պայմանագրութեամբ , նօտարութենէն վաւերացուած կամ երկուստեք ստորագրուած : Ընկերութեան վարիչն անձնապէս պատասխանատու ընկեր մը միայն կրնայ ըլլալ :

Քօմանտիդէնին արգիլուած է այս պաշտօնն ստանձնել, նոյն իսկ փոխանորդաբար, որովհետեւ իր պատասխանատուութիւնը սահմանափակ ըլլալով, կը վախցուի որ մի՛ գուցէ յանդուգն գործառնութիւններով ընկերութեան շահերը վտանգէ: Կանոնադանցութեան պարագային քօմանտիդէնը իր բոլոր ստացուածքով պատասխանատու կը նկատուի ընկերութեան պարտքերուն եւ յանձառութիւններուն համար, միւս պատասխանատու ընկերներուն հետ: Եթէ ծանր սխալներ գործած է իր վարչութեան մէջ, այն ատեն մինակ ինք կը վճարէ վնասները: Քօմանտիդէնը վարիչ չի կրնար ըլլալ, բայց վարիչին հրամանին տակ կրնայ աշխատիլ, այսինքն կրնայ տետրակները բռնել, գործարանի մը մէջ հսկողութիւն կատարել, եւն. զի ասոնք վարչական գործեր չեն: Վարչական գործերու էական նկարագիրն է ուրիշներուն հետ ուղղակի յարաբերութեան մտնել, իբր ներկայացուցիչ ընկերութեան: Այսպէս, վաճառման կամ գնման գործողութիւնք, փոխառութիւնք, յանուն ընկերութեան յանձնառութիւնք վարչական գործեր են: Քօմանտիդէնը կրնայ խորհուրդներ տալ վարիչին եւ հակակշիռ ի գործ դնել, տետրակներն ու սնտուկն աչքէ անցընել, ընկերութեան շահուն վրայ խորհրդակցութիւններ ունենալ վարիչին հետ եւայլն:

3. — ՔՕՄԱՆՏԻԴ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲԱԺՆԵԹՈՒՂԹՈՎ

(Société en Commandite par Actions)

Բաժանում գրամագլուխի. — Պարզ Քօմանտիդ ընկերութեան գրամագլուխը կը բաժնուի մասնակի շահերու, զոր օրինակ $\frac{1}{3}$ ի, $\frac{1}{4}$ ի, $\frac{1}{10}$ ի և այլ շահարածնի իրաւունքը չի կրնար ծախուիլ, եւ հետեւապէս քօմանտիդէնը կապուած է ընկերութեան, մինչև անոր լուծումը: Քօմանտիդ ընկերութեան գրամագլուխը կրնայ նաեւ բաժնեթուղթերու վերածուիլ: Բաժնեթուղթն ընդհանրապէս որոշ գումար մը կը ներկայացնէ, ինչպէս 100 Փր., 500 Փր. 1000 Փր. եւն.: Բաժնեթուղթը սա առաւելութիւնն ունի որ կրնայ ուրիշին փոխանցուիլ պարզ եւ արագ միջոցով: Երբ ընկերութեան գործերն յաւաքուիմեն, բաժնեթուղթերը շահով ծախելէ ետք բաժնետէրը կրնայ քաշուիլ:

ՊԱՆԶԱՅԻ ԼԱՍՐԵՆԵՐ

ՄՐԱՌԻ ՏԵՍԱԿ ԴՐԱՄՈՎ

Գործողութիւնք Լիոնի Ք. Պանֆային եւ Քօնդուառ Ռիւսի միջեւ
Մայիս 10. — Ք. Պանքան Քօնդուառ Ռիւսի կը շրկէ հետեւեալ թուղթերը. —

Բուպլի 9000 Օտեսա 20 Յունիս

» 4000 » 30 »

Մայիս 20. — Օտեսայէն պօրսքօ կ'ընդունի 12,911.25 բուպլիի, արժէք 16 Մայիս: Զեղչ ի Ռուսիա 50%:

Մայիս 20. — Մի եւ նոյն թղթատարով Օտեսա Լիոն կը շրկէ
Փր. 12,000 Բարիզ, 31 Մայիս
» 6,000 Լիոն 10 Յունիս

Լիոն այս թուղթերը կը շրկէ 2½ %ի, պօրսքօն Օտեսա կը շրկէ եւ զուտ արժէքը կ'անցընէ իրենց Փրանքի հաշուոյն պահանջքին:

Մայիս 25. — Լիոն Քօնդուառ Ռիւսի վրայ 300 բպլ. նոց չէք մը կը յանձնէ, Պալմօնի հրամանին: Պալմօն փոխարէնը կը վճարէ 1/100% յանձնարարողչէքով. դրոշմ չէքի 0,20, փոխանակագին ի տես 267:

Մայիս 31. — Լիոն իր յաճախորդէն՝ Պէսսօնէ՝ հրաման կ'ստանայ Օտեսայի Զինօֆ եղբարց յանձնել 5000 բպլ.: Լիոն կ'առնէ 1/200% յանձնարարողչէք եւ Քօնդուառ Ռիւսին հրաման կ'ընէ վճարելու: Փոխանակագին 3 ամիս 264 եւ 40%:

Յունիս 8. — Լիոն զեկոյց կ'ստանայ թէ Պալմօնի չէքը վըճարուած է Յունիս 2ին:

Յունիս 10. — Տիմսքի Օտեսայէ յանձնուած վարկագիր մը կը ներկայացնէ ի Լիոն, որ կը վճարէ 500 Փրանք:

Յունիս 11. — Լիոն լուր կ'առնէ թէ 5000 բուպլին վճարուած է Զինօֆ եղբարց, Յունիս 5ին:

Յունիս 11. — Լիոն, Օտեսայի հաշուոյն, 500 սդեռլին կը շրկէ Լոնտոն: Լոնտոնի վրայ ի տես փոխանակագին Բարիզի, 25,22: Այս չէքը կը քաշուի Ք. պանքայի թղթակցին վրայ ի Լոնտոն:

Յունիս 12. — Լիոն 25,000 Փր.ի վարկ մը կը բանայ իր յա-

ճախորդներէն Սալիէրի: Այս վարկը պիտի գործածուի Օտեսայի վրայ քաշուած փոխանակագրով:

Յունիս 12. — Լիօն կը յանձնէ Օտեսայի. —

Բալլ. 12,000 Օտեսա 25 Յունիս

» 6,000 » 12 Յուլիս

» 15,000 » 31 »

Եւ կը խնդրէ որ ասոնց յիշին արժէքն իր հաշուոյն անցնի:

Եռամսեայ փոխանակագին 2 $\frac{35}{100}$ եւ 4 $\frac{0}{100}$:

Յունիս 20. — Լիօն կ'ընդունի Օտեսայի պօրսքօն, Յուլիս 3:

Յունիս 20. — Բուպլիի հաշուոյն պահանջին անցընելու համար Օտեսա կը զրկէ Լիօնի. —

Ֆրանք 9,000 Բարիզ 30 Յունիս

» 4,500 Լիօն 10 Յուլիս

» 3,800 Մարսիլիա 20 »

» 10,000 » 31 »

Յունիս 16ին գնուած յՕտեսա, 37 եւ 2 $\frac{0}{100}$. — Ֆրանս, գրողմ $\frac{1}{2}$ $\frac{0}{100}$:

Յունիս 20. — Լիօն Օտեսայէ կ'ընդունի եւ անոր հաշուոյն ծախել կուտայ 20 հատ 1880ի Ռուսական 4 $\frac{0}{100}$ պարտաթուղթ, 104էն: Միջնորդէ՞ք $\frac{1}{8}$ $\frac{0}{100}$, սակարանի տուրք 0,05 $\frac{0}{100}$:

Յունիս 20. — Օտեսայի Ֆրանքի հաշուոյն պահանջը նուազեցնելու համար Լիօն կը զրկէ


Բալլ. 1,800 Օտեսա 30 Յունիս

Եռամսեայ փոխանակագին 265 եւ 4 $\frac{0}{100}$

Յունիս 30. — Լիօն Ֆրանքի ընթացիկ հաշիւը կը փակէ 2 $\frac{0}{100}$ ով, եւ բուպլիի ընթացիկ հաշիւը՝ 5 $\frac{0}{100}$ ով: Մէն մի թղթակից $\frac{1}{20}$ $\frac{0}{100}$ յանձնարարողչէքի իրաւունք ունի, ի հաշիւ միւսին եղած գործողութիւններու համար: Ի տես բուպլիներն 26 $\frac{71}{100}$ հաշուուած ըլլալով, Լիօն Ֆրանքի սիւնակներուն տարբերութիւնը Օրհաշիւ կ'անցընէ:

Տեարք հաշուակալը կը հրաւիրուին այս յօդուածներն անցընել Ք. Պանքային Օրհաշուին մէջ: Մեզ զրկուած լաւագոյն լուծումը կը հրատարակենք յաջորդ թիւին մէջ, լուծողին ստորագրութեամբ:

ԽՄԲԱԳԻՐ — ՍԻՄՕՆ ԶԷՕՄԼԷՖՃԵԱՆ



Բարիգի Առեւտրական Վարժարանին (Բիժիէ) մէկ դասարանն է ուր աշակերտք գործնականապէս կ'ուսանին մաքսէն ապրանք հանելու կամ երկաթուղիով Քօլի-բօսդալ եւ այլն դրկելու օրինական ձեւակերպութիւնները:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԲԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐՍ ԿԻՉ
ՆՇԱՆ, Կ. ՊԵՐՊԷՐՅԱՆ.

Պապը Ալի ճատտէսի, Խիւ 33, Իգտամ լրագրին դէմ

Պիտի տեսնելի որ անգլիական ստացուածներու մէջ Հնդկաստան իր ղրկածէն աւելի ապրանք կ'ստանայ մայր հայրենիքէն: Այսպէս է նաեւ Բարեյոյսի դաղթավայրը, մինչ հակառակը տեղի ունեցած է Քանատայի եւ Աւստրալիոյ համար: Ներածումներու մէջ Ֆրանսա եւ Միացեալ Նահանգները առաջին կարգին վրայ կը գտնուին. իսկ արտածումներու մէջ Գերմանիոյ բաժինն աւելի մեծ է քան Ֆրանսայի կամ Մ. Նահանգաց բաժինը: Անգլիոյ արտածութիւնք կրնան հետեւեալ դասակարգերուն վերածուիլ.

Բուսական արտադրութիւններ	1000 Սդեռ.	90,292
Կենդանական »	»	47,592
Նախանիւթեր քիմիական ճարտարութ. համար	»	36,396
Կաթնային արտադրութիւններ	»	29,236
Մետաղք	»	20,321
Թէյ, խահուէ, եւայլն	»	16,927
Նիւթեր՝ որոց ծագումը կենդանական է	»	15,700
Մետաղական հանածոներ	»	10,468
Պտուղ	»	10,453
Ձգեստ	»	9,971
Ըմպելի	»	8,658
Տպագրական գործիներ	»	7,028
Ապակեղէն եւ ֆայանս	»	4,145
Ուտեստ՝ կենդանեաց համար	»	2,842
Ձանաղան ապրանքներ	»	46,103
Ուրիշ ներածումներ	»	7,317
	Գումար	363,449

Այս դասակարգերէն իւրաքանչիւրը վերլուծուած է 5 ծուցակին մէջ: Պիտի դիտուի որ Անգլիա տարազագործ ազգերուն առաջիններէն մին է: Հետեւապէս ներածումներու մեծ մասը կը կազմեն նախանիւթերը: — Անգլիոյ արտածութիւնք մանրամասնութեամբ ներկայացուած են 6. եւ 7. ցուցակներուն մէջ, որոց ամբողջումը կ'ընենք ստորեւ.

Հիւսելական արտադրութիւններ	1000 Սդ.	125,214
Խամ եւ բանուած մետաղներ	»	53,748
Թուղթ եւ տպագրական նիւթեր	»	16,642
Քիմիական արտադրութիւններ եւ նախանիւթեր	»	19,640

Կենդանական, բուսային և կաթնային արտադր. Սդ.	12,045
Ըմպելի	» 4,421
Ապակեղէն	» 2,704
Թէյ, խահուէ, եւայլն	» 4,038
Կենդանային նիւթեր	» 4,576
Պտուղ	» 888
Զգեստ	» 4,490
Զանազան ապրանքներ	» 30,990
Ուրիշ արտածումներ	» 15,018
Գումար	» 294,014

Այս արտածումներուն ամէնէն կարեւորներն են. —

Բամբակեղէնք	1000 Սդ.	69,635
Բրդեղէնք	»	33,971
Երկաթ, պողպատ եւայլն	»	24,103
Շոգեչարժ մեքենաներ	»	18,389
Ածուխ	»	18,135
Թուղթ և թուղթի շինութեան յատուկ նիւթեր	»	14,317
Գումար	»	178,550

Անգլիական վաճառականութիւնը ահա այսպէս շատ անձուկ հիման մը վրայ հաստատուած է, այսինքն արտադրութիւններու 6 խումբի վրայ որք ամբողջ արտածութեան 60%₁₀ը կը կազմեն: — Ներածումներու եւ արտածումներու վերոյիշեալ ցուցակներուն մէջ զանց առնուած են երկու կարեւոր տարրեր. — թանկագին մետաղներն ու նաւերը: Ահաւասիկ առաջիններուն ցուցակը. —

Ներածում	Օտար երկիրներ	Բրիտանակ. գաղթավայր
Ոսկի 1000 Սդ.	16,745	26,978
Արծաթ »	14,493	185
»	31,238	27,163

Արտածում	Օտար երկիրներ	Բրիտանակ. գաղթավայր
Ոսկի Սդ.	33,763	2,827
Արծաթ »	9,156	6,468
»	42,919	9,295

Նաւային շինութիւնք. — Շատ դժուար է հաշուել Անգլիոյ արտածութիւններուն այս մասը: Երկրէն դուրս ելնող նոր նաւերու արժէքը հրատարակուած չէ տեղ մը: Միայն թօնօյի քանակութիւնը ցոյց տրուած է ստորեւ. —

Ելեւէջները մէկ տարիէն միւսը չատ մեծ ըլլալով այս ճարտարութեամբ մէջ, հետեւեալ ցուցակը կը պարունակէ հինգ տարիներու թիւերը: Անգլիոյ ծովային նաւարարութեան համար շինուած մարտանաւերն այս հաշուէն դուրս են, բայց օտար ազգաց համար շինուած մարտանաւերը մէջն են:

Ա Ռ Ա Գ Ա Ս Տ Ա Շ Ա Ի

Շ Ո Գ Ե Ն Ա Ի

Տարի	Անգլիոյ համար շինուած	Ուրիշ երկիրներու	Համագումար	Անգլ. հմր. շինուած	Ուրիշ երկիրներու	Համագումար
1894	89	10	99	485	84	569
1895	54	11	65	465	117	582
1896	57	15	72	463	201	664
1897	67	23	90	416	139	555
1898	42	3	45	654	172	826
	309	62	371	2483	713	3196
Միջին	61, 8	12, 4	74, 4	496, 6	142, 6	639, 2

1898ին շինուած նաւերուն տարողութիւնն է 871,000 թօնօ: Թօնօ գլուխ 40 սդ. հաշուելով՝ կ'ունենանք 7 միլիոն սդ. զոր պէտք է աւելցնել Անգլիոյ արտածութիւններուն վրայ: Նաւային ամենաստոյգ վիճակագրութիւններէ կ'երեւի որ 1900ին շինուած են ընդամենը 1463 նաւ 2,564,627 թօնօ տարողութեամբ: Անգլիոյ բաժինն է 721 նաւ, Մ. Նահանգաց բաժինը՝ 249, Գերմանիոյ բաժինը՝ 116, Ֆրանսայի բաժինը՝ 85: Յետոյ կուգան Հոլանտա, Նորվեգիա, Ռուսիա, Աւստրիա. Իտալիա եւայլն: 8 ցուցակին մէջ կ'երեւի օտար վաճառականութեան բաշխումը Անգլիոյ զանազան նաւահանգիստներուն մէջ: Լոնտոն ամէնէն ընդարձակ եւ ամէնէն կարեւոր կեդրոնն է: Լոնտոնի մէջ կեդրոնացած վաճառականութեան գումարն է 300 միլիոն սդերլին, այսինքն Անգլիոյ ամբողջ վաճառականութեան 38 րոյն: Յետոյ կուգան Լիվրքուլ և Մըրսիի միւս նաւահանգիստները, 206 միլիոն սդերլին, Հըմպըրի նաւահանգիստները (Հըլ, Կուլ, Կրիմուպի) եւ Սէվըրնի նաւահանգիստները (Պրիստօլ, Բարտիֆ, Էւն.): Հարաւարեւելքի նաւահանգիստներուն (Տուվըր, Ֆօլքէսդըն, Նիւհամփըն, Էւն.) վաճառականութիւնը Լոնտոնի վաճառականութեան մասը կը կազմէ:

Ա. — 1896ին Անգլիոյ պանֆաները եւ անոնց մասնաճիւղերը

	Պանքաներ	Մասնաճիւղեր
Անգլիա — Բաժնեթուղթով պանքաներ	99	3421
» Մասնաւոր »	100	416
Սկոտլա — Բաժնեթուղթով պանքաներ	10	1017
Իրլանտա — » »	9	648
» — Մասնաւոր »	2	2
Անգլիանորման կղզիներ եւ Մէն կղզի	7	23
Լոնտոնի ձէջ մասնաճիւղ ունեցող Գաղթային եւ օտար պանքաներ	130	131
Համագումար	357	5658

Բ. Յուլցակ. — Ամփոփում 149 պանֆաներու հաշուեկշիւին

(1896) — 1000 սպեւին

Մասնաւոր Բաժնեթուղթով

Պանքա Պանքա

1

Անգլիոյ Պանֆա. — ՊԱՐՏԳ. — Վճար. դրամագլուխ 14,553, պահեստ 3,193, պաքտում 84,400, ընդունուած թուղթեր 129: — ԳՈՅԳ. — Փոխատուութիւն 30,553, Շահադիտութիւնք եւ սեփականութիւնք 34,563, Պատրաստ դրամ 34,159:

9

16

Լոնտոնի Պանֆաներ. — ՊԱՐՏԳ. — Վճր. դրմդ. 13,958, պհստ. 5,821, պանքտում 118,830, թուղթ 12,575: — ԳՈՅԳ. — Փոխ. 81,881, Շահադիտ. և ըն. 35,974, պատրաստ 33,329:

2

14

Լոնտոնի եւ զաւառի Պանֆաներ. — ՊԱՐՏԳ. — Վճր. դրմ. 16,511, պհստ. 10,405, պնքտում. 242,389, թուղթ 7,102: — ԳՈՅԳ. — Փոխա. 150,892, Շահադ. 66,014, պատրաստ. 59,501:

18

65

Գաւառային Պանֆաներ. — ՊԱՐՏԳ. — Վճր. դրմ. 22,298, պհստ. 12,042, պնքտ. 195,740, թղթ. 4,878: — ԳՈՅԳ. — Փոխա. 143,192, Շահադիտութ. 54,740, պատրաստ 37,017:

- 5 Մեն կղզիի եւ այլ Պանֆաներ. — ՊԱՐՏՔ. — ՎՃ. դրմ. 153, պհստ. 154, պնքտմս. 2,606, — ԳՈՅՔ. Փոխատ. 1,450, շահադիտութ. 1,139, պատրաստ 324:
- 10 Սկովսական Պանֆաներ. — ՊԱՐՏՔ. — ՎՃար. դրամ. 9,302, պհստ. 6,212, պնքտ. 105,191 թղթ. 3,606. — ԳՈՅՔ. — Փոխատուութ. 68,101, չհդ. 34,269, պհստ. 21,941:
- 9 Իրլանդական Պանֆաներ. — ՊԱՐՏՔ. — ՎՃր. դրմ. 7,109, պհստ. 3,337, պնքտմ. 51,900, թղթ. 282: — ԳՈՅՔ. — Փոխատ. 34,127, շահադիտութ. 19,170, պահեստ 9,331:

29

120

Գ. ցուցակ. — Շրջաբերութեան հանուած տոմսեր

	1888		1898	
	Սդ.	%	Սդ.	%
Անգլիոյ պանքա	23,987,000	60.2	27,178,264	63.2
Գաւառային Անգլ. պանքա	2,524,270	6.3	1,408,928	3.2
Սկովտական պանքաներ	6,395,778	16.1	8,024,758	18.6
Իրլանտական պանքաներ	6,935,477	17.4	6,401,314	15
	39,842,525	100	43,013,264	100

Գ. ցուցակ — Անգլիոյ պանֆաներուն շահն ու ծախքը

		ՋՈՒՏ ՇԱՀ	ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՔ		
		Պանքաներու	Շահ	Ծախք	Պանքաներու
		Թիւը	1000 Սդ.	1000 Սդ.	Թիւը
Անգլիոյ պանքա	1	1,346.2	—	—	—
Լոնտոնի պանքաներ	12	911.4	704.4	40	10
» և գաւառ. պանք	12	2,240.6	1,296.2	8	8
Գաւառային պանքան.	64	2,550.8	854.0	31	31
Մէն կղզիի	» 5	33.5	17.4	5	5
Սկովտական	» 10	1,235.8	883.7	6	6
Իրլանտական	» 9	831.3	471.6	5	5
		113	9,149.6	4,228.3	65

Ե. ցուցակ. — Համեմատութիւն ժողովրդեան եւ երկրագործութեան միջեւ (1891)

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՊԱՐԱՊՈՂ

	Այր	Կին	Երկրագործ ժողովր. համեմատութ. ընդհ. ժողովուրդին հետ
Անգլիա և Կալլէտի երկիր	1.260,024	51,696	4,5
Սկոտլանդ	183,902	29,158	5,2
Իռլանտա	938,839	95,939	21,9
Կղզիներ	10,974	813	7,9
	2,393,739	177,606	6,7

Զ. ցուցակ. — Համեմատութիւն մշակուած հողերու

	%
Անգլիա	71.6
Կալլէտի երկիր	64.5
Սկոտլանդ	25.1
Իռլանտա	73.4
Կղզիներ	64.4

Է. ցուցակ. — Զանազան հունձներու մշակութեան յաւկայ-
ցած հողեր (1898). (acre)

	Մեծն Բրիտանիա	Իռլանտա	Կղզիներ
Արմտիք, լուբիա	7,400,335	1,390,941	25,480
Գետնախնձոր, կաղամբ	3,133,470	1,105,026	22,945
Ուրիշ հունձքեր (1)	4,911,350	1,252,889	46,773
Արօտավայր (2)	16,559,392	11,390,950	28,357
Ուրիշ մշակելի հողեր (3)	472,484	51,346	736

(1) Այսինքն վուշ, հմուլ եւայլն:

(2) Մարգագետիններն ալ կը պարունակէ:

(3) Այսինքն մրգաստան, բանջարանոց, տնկարան եւայլն:

Ը. ցուցակ. — Ընդհանուր արտադրութիւն զանազան հունձ-
քերու (1898) եւ միջին արդիւնք

	Մեծն ԲՐԻՏԱՆԻԱ		ԻՐԼԱՆԾԱ	
	Հունձք Գրիւ	Գրիւ par acre	Հունձք Գրիւ	Գրիւ par acre
Յորեն	73,028,856	34,7	1,856,424	35,1
Դարի	68,051,918	35,7	6,678,867	42,2
Վարսակ	118,920,917	40,7	53,657,356	46,0
Արմատիք	260,001,691		62,192,647	
Հուրիա	7,200,131	31,0	66,631	38,9
Ոլոռն	4,848,794	27,6	9,216	21,8
Գետնախնձոր, թօնօ	3,282,517	6,2	2,942,263	4,4
Արմատներ	27,554,540	13,3	6,172,459	17,0
Չոր խոտ	10,638,043	1,5	5,277,623	2,4
Հմուլ, կենդինար	356,598	7,1		

Թ. ցուցակ. — Երկրագործութեան ու դուրսաբուծութեան
յատուկ կենդանիներ

	Մեծն Բրիտանիա	Իռլանտա	Կղզիներ
Չի	1,157,160	513,788	2,040,330
Եղջիւրաւոր անասուն	6,622,364	4,486,242	11,149,212
Ոչխար	26,743,194	4,287,274	31,102,359
Խոզ	2,451,595	1,253,682	3,719,219

Ցուցակ 1. — Ներածութիւնք եւ Արտածութիւնք 1900 տարւոյ

Ներածում	Սդ.
Օտար երկիրներէ	413,436,000
Բրիտանական գաղթավայրերէ	110,099,000
	523,535,000
Արտածում	
Օտար երկիրներ	197,129,000
Բրիտանական գաղթավայրեր	94,322,000
	291,451,000

Յուճակի 2. — Վերոյիշեալ արժանութեանց վերլուծումը

	Սղեռիկն	%
Անգլ. արտադրութ. ու բաննաժ առարկաներ	291,451,000	82
Օտար եւ զաղթային ապրանքներ	63,099,000	18
	354,550,000	100

Յուճակի 3. — Օտար երկիրներու հետ Անգլիոյ վաճառակա-
նութիւնը 1898ին

	Ներածում 1000 Սղ.	Արտածում 1000 Սղ.
Թուրքիա	21,981	11,008
Շուէտ	10,642	5,424
Նորվեգիա	5,730	3,310
Դանիա	13,199	4,254
Գերմանիա	31,161	28,074
Հոլանտա	31,391	10,913
Պելժիա	23,523	10,786
Ֆրանսա	53,727	21,203
Բորթուկալ	3,236	2,123
Սպանիա	15,906	5,599
Իտալիա	3,421	8,757
Աւստրիա	1,373	2,509
Յունաստան	2,263	1,055
Թուրքիա	18,348	11,083
Հնդկաստան	1,965	4,032
Չինաստան (Հոնկ Բօնկը Վէճը չէ)	2,422	5574
Ճաբոն	—	—
Միացեալ Նահանգներ	138,761	19,771
Մեքսիկա	430	2,099
Բերու	—	—
Չիլի	4,825	3,240
Պարագիլիա	5,945	5,821
Ուրուկուէյ	490	1,693
Արժանդին	12,942	7,131
Ուրիչ օտար երկիրներ	9,733	22,680
	413,436	197,129

[Faint handwritten text at the bottom of the page]

708

ԶեկոՅՑ. — Մի քանի տեղերէ մեզ կը հարցնեն թէ՞ բաժ-
նեգիւնները ի՞նչ միջոցով ղրկուելու են: — Այնպիսի բաժանորդ-
ները կրնան Օսմանեան թղթատարութեան դրոշմաթուղթով եւ
կամ Մանտա բութով մեր հասցէին ղրկել ուղղակի:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

Ն Ի

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբա-
թական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը
պիտի յատկացուի Առաջնորդ վաճառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վաճառականացի 12 տեղը զաւ առնել ուղղող պէտք
է վճարէ 12 դրուշ:

Առաջնորդ վաճառականացի Բ. Հատորին այս Երդ թիւը
հրատարակելու ատեն միանգամ ընդ միշտ կը ծանուցանենք թէ՛

Ա. — Բոլոր Բաժանորդները որոնք Առաջնորդ վաճառակա-
նացի Բ. Հատորին համար բաժնեգինը կանխիկ խրկած էին ար-
դէն, ասկէ վերջը կանոնաւորաբար ամէն ամիս ոոյն թերթին՝
պրակները պիտի ստանան մինչեւ որ բաժանորդութիւնը աւարտի:

Բ. — Անոնց՝ որոնք մինչեւ հիմայ հրատարակուած հինգ
պրակները ընդունած են եւ սակայն դրամը չեն վճարած, պիտի
ղրկենք այս Զ. պրակը իմաց տալու համար թէ այսուհետեւ
թերթը պիտի հրատարակուի կանոնաւորապէս:

Ուստի, եթէ կ'ուզեն ընդունիլ յաջորդ ամիսներու մէջ հրատա-
րակուած պրակները՝ պարտաւոր են իմաց տալ Հրատարակչին:

Գ. — ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ դիրքը վերածուած է անսակ ձեւի մը
որ «Առաջնորդ վաճառականաց» ի ասկէ առաջ հրատարակուած
հինգ պրակներուն կը համապատասխանէ թէ մեծութեամբ, թէ
երեսներու թուագրութեամբ "եւ թէ՛ նամանականդ նիւթերու
չարունակութեամբ, հետեւաբար ասկէ վերջը հրատարակուելիք
վաճառականական նիւթերու յատուկ թիւերը կարելի պիտի ըլ-
լայ ասկէ առաջ լոյս տեսած պրակներուն հետ մէկտեղ բերել:

Հասցէ՝ ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ, Կ. Պոլիս, Պասկ-Ալի ճատտէսի, 38

Հատը 30 փարայ